

Thus, the material under investigation provides a modern and scientific view point.

«ԶՐԱԲԵՐԴ» ԱՄՐՈՑԸ

Սլավա Սարգսյան

L77

Հնուց ի վեր Թարթառի հովիտը եւ այն շրջափակող անտառապատ ու բարձրաբերձ լեռնալանջերը (Մոավ լեռնաշղթայի, դաշտաբերանի, Թրղի եւ Թարթառ գետերի ծախ եւ Կուրակ գետակի աջ ափերի մեջ)¹ կազմել են Արցախ նահանգի Մեծկուտենք (Մեծկողմանք) գավառը:

Հնագիտական հետազոտությունները վկայում են, որ մարդն այստեղ ապրել ու ստեղծագործել է հնագույն ժամանակներից: Այն Հայաստանի ամենախիտ բնակեցված վայրերից էր: Հայտնի է նաև, որ հետագայում, մասնավորապես արաբական տիրապետության ընթացքում, Մեծկուտենքը ընդգրկվում է առեւտրական ակտիվ գործառնության ոլորտի մեջ եւ Ղվիճ-Պարտավ տարանցիկ առեւտրական ճանապարհով, որի վրա ստեղծվել էն մի շարք կայաններ, այդ թվում Հաթերքի եւ Կաղանկատույքի կայանները², կապվում էր Հայաստանի կենտրոնական շրջաններին:

Գավառի պաշտպանությունը կազմակերպվում էր մի շարք հենակետերի միջոցով, որոնց մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Զրաբերդ՝ միջնադարյան Հայաստանի ամենահզոր ամրոցներից մեկը:

Զրաբերդը լիակատար եւ համակողմանի ուսումնասիրության չի ենթարկվել: Անրոցի մասին ամենավաղ հիշատակությունը վերաբերում է Խաչեն ներխուժած խազարների 620-ական թվականների վերջերի ասպատակություններին եւ դրանց դեմ Աղվանից կաթողիկոս Վիրոյի ձեռնարկած միջոցառումներին, որի մասին հաղորդում է Մ. Կաղանկատվա-

¹ Բարիստարեանց Մ., Արցախ, Բագու, 1895, էջ 24:

² Սամամրյան Յ. Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պեյտինգերյան քարտեզի, Երեւան, 1936, էջ 202:

ցին՝ մանրակրկիտ նկարագրելով վայրենասուն ու թափառական ծիավորների պատճառած սարսափներն ու վայրագությունները:¹ Կողթ-ագարակ կոչված գյուղից փախչելով Զարաբերդ (Ջրաբերդ) ամրոցը՝ Աղվանից կաթողիկոսն իր շուրջն է հավաքում «...զամենայն գլխավորս զորդիս թագաւորազանց մեծաց աշխարհիս, զգաւառապետս եւ զգիւղապետս, զերիցունս եւ զարկաւագունս եւ զդախրս...»², որ ամենքը բերեն իրենց հարստությունները՝ ոսկի, արժաք, հագուստներ եւ այլն, որպեսզի դրանցով հնարավոր լինի կաշառել անազորույն թշնամուն³ եւ երկիրը զերծ պահել նախճիրներից:

Ուստի դաշտում բանակած խազարների գորահրամանատար Շաքը, ընդունելով նվերները, խոստանում է չասպատակել Հայոց Արեւելից Կողմանքը եւ գերիներին շնորհել ազատություն⁴:

Ամրոցը հիշատակվում է նաեւ Կ. Գանձակեցու⁵, Ստ. Օրբելյանի⁶ պատմություններում:

Խնդրին անդրադարձել են նաեւ Ղ. Ալիշանը⁷, Յ. Ջյուբշմանը⁸, Մ. Բարխուտարեանցը⁹, Լեռն¹⁰, Յ. Մանանդյանը¹¹, Բ. Ուլուբարյանը¹² եւ ուրիշներ:

Այսուհանդերձ, VII դ. կեսերից մինչեւ XI դ. Զրաբերդը չի հիշվում մեր պատմության մեջ: Երբ XI դ. երկրորդ կեսից Արցախն ընկնում է սեղուկ - թուրքերի տիրապետության տակ, Զրաբերդը, այլ ամրոցների հետ անցնում է Գանձակի գավառի թուրքմենների հսկողության տակ¹³, որոնց գլխավորում էր Խուհուուղտին: Վերջինս, նպատակ հետապնդելով ընդարձակելու իր տիրապետության սահմանները, հարձակումներ է գործում Արցախի ամրությունների, այդ թվում Զրաբերդի վրա (1142թ.): 1143-44թթ. Խաչենի կողմներն է ասպատակում Զավլի ամիրան, որը գրավում է

¹ Կաղամկատվացի Ս. Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երեւան, 1983, էջ 156-158: Ուլուբարյան Բ., Դրվագներ Հայոց արեւելից կողմանց պատմության, Երեւան, 1981, էջ 206-233:

² Կաղամկատվացի Ս., էջ 157:

³ Լեռ, Հայոց Պատմություն, հ. 2, Երեւան, 1967, էջ 262:

⁴ Արտաման Մ., Օւերս օրենուայել պատմության ազար, Լենինգրադ, 1936, էջ 62-63:

⁵ Գանձակեցի Կ., Պատմութիւն Զայոց, Երեւան, 1961, էջ 359:

⁶ Օրբելյան Ստ., Պատմութիւն Զահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 392:

⁷ Ալիշան Ղ., Հայապատում, Վեմեսիկ, 1901, էջ 387, նույնի՝ Արցախ, «Բազմավեպ», 1988, N 1-4, էջ 253:

⁸ Յիհրշման Ղ., Ղիմ Հայոց Տեղիոյ ամունները, Վիեննա, 1907, էջ 397:

⁹ Մ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 240:

¹⁰ Լեռ, Ղայ հեռուսներ. Զրաբերդ, մելիքներ եւ նրանց քաջերը. Երեւան, 1920, էջ 5-24, Վերջին վերեր, մաս 1-ին, Թիֆլիս, 1891, էջ 13-16, Իմ հիշատակարանը, Ծուշի, 1890, էջ 252-264:

¹¹ Մանանդյան Ղ., Երկեր, հ. 9, Երեւան, 1977, էջ 153, 230:

¹² Ուլուբարյան Բ., Խաչենի հշկանությունը X-XVI դարերում, Երեւան, 1975, էջ 119, 120, 190, 400:

¹³ Մանանդյան Ղ., Երկեր, հ. 9, էջ 106-107:

ամրոցները, քանդում եկեղեցիները, այրում վաճքերը¹: Ս. Անեցին նույն անցքերի մասին գրում է, որ. «Ոնես. ի ՇՂԲ. ամին Չոլի առնու զամուրսն Խաչէնոյ Խաբեռութեամբ եւ Երդմամբ յինքն յանկուցանէլով զսիրտս իշխանացն...»²: Նույն փաստն է Երկրորդում նաեւ Մ. Այրիվանեցին³: Սելջուկ ցեղախմբերը հայկական գյուղերն ու տարածքները նվաճում էին ինչպես բռնությամբ, այնպես էլ խնամիական կապերի միջոցով:⁴ 1147-48 թթ. Խոխանաբերդի իշխան Գրիգորին փեսայացել էր «որդի Դարին Տաւդան անուն, իշխան աշխարհին ճառաբերդոյ եւ նորին դդեակին...»⁵, որն այնքան էր ամբարտավան դարձել, որ ցանկանում էր գրավել նաեւ շրջակա գավառները: Սակայն Տողանը իր նպատակներն իրագործելու համար պետք է հաղթահարեր որդու՝ սելջուկ մեծ սուլթան Զախր-շահի ընդդիմությունը, որը հաստատվել էր Զրաբերդի մատուցներում եւ ծգուում էր իրեն ենթարկել եւ հարկատու դարձնել հորն ու նրա աներոջը.⁶

Սկսած XII դ. կեսերից, Արցախ Երկրամասը հակասելուկյան պայքարի մեջ էր, իսկ դարավերջին՝ գործուն դեր էր կատարում Զաքարյան իշխանների ռազմա-քաղաքական ձեռնարկումներում⁷: Ինչպես վկայում են աղբյուրները⁸, 1211-12թթ. Զաքարյան իշխանները մեծ ջանքերի գնով սելջուկ թուրքերից ազատագրեցին Յայոց Երկրները՝ Արանից մինչեւ Ներքին Բասեն, Բարկուշատից Մժնկերտ, որոնց մեջ էին նաեւ Գարդմանը, Պարտավն ու Զրաբերդը: Սակայն, թուրք սուլթան Զալալ-ադ-Դինի (1227-30թթ.), իսկ հետո՝ մոնղոլական արշավանքների հետեւանքով հայկական իշխանությունների հետագա ճակատագիրը ստացավ նոր ընթացք: Զրաբերդն ընկավ սկզբում Զալալ-ադ-Դինի, իսկ հետո՝ մոնղոլների իշխանության ներքո: Զալալ-ադ-Դինի անձնական քարտուղար ան-Նասավիի մի տեղեկությունից պարզվում է, որ սուլթանը Զրաբերդում ամրոցի վալի Սախլան Սալուկբեկի միջոցով ձերբակալում է իր իսկ զորահրամանատար Շարաֆ ալ-Մուլքին, որի հետ սրվել էին հարաբերությունները՝ կապված հատկապես գանձատան գումարների շռայլումների հետ:⁹

¹ Ալիշան Դ., Յայապատում, էջ 386: Մեկ այլ առիթով Դ. Ալիշանը (Արցախ, «Քազմավեպ», 1988, N 1-4, էջ 269) նշում է, որ Զավիհն կրկին անգամ հարձակվելով (1146-47թթ. – Ս. Ս.) «զամրոցսն ոչ կարաց արնուլ, բայց զգաւառն զամենայն իսպառ աւերե՛»:

² Անեցի Ս., Յաւաքմոնք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 132:

³ Այրիվանեցի Ս., Պատմութիմն Յայոց, Սուլվա, 1860, էջ 63:

⁴ Ուղուարքան Բ., Խաչենի իշխանությունը, էջ 120:

⁵ Ալիշան Դ., Յայապատում, էջ 387, նույնի Արցախ, «Քազմավեպ», էջ 253-254:

⁶ Ուղուարքան Բ., Խաչենի իշխանությունը, էջ 120:

⁷ Ուղուարքան Բ., Խաչենի իշխանությունը, էջ 124:

⁸ Օրբելյան Ստ., Ծշիւ. աշխ., էջ 391-392:

⁹ Ռուխան ած – Ջի Մոհամմադ ան-Նասավ, Ժизнеописание сultана Джасалад аծ – Дина Манкбурны, Բակու, 1973, էջ 276, 280-281:

Զրաբերդը ակնարկվում է նաեւ մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում, եթի իր հայրենական իշխանության սահմանները վերականգնելու նապատակով 1246թ. Բարուի եւ նրա որդի Սարթախի մոտ մեկնեց ներքին Խաչենի Յասան Զալալ իշխանը: Վերջինիս ընդունեցին մեծարանքով եւ հրամայեցին վերադարձնել հայրենական կալվածքները՝ «իւր զՉարաբերդ եւ զԱկանա եւ զԿարկառ»¹, որ առաջներուն խլել էին թուրքերը²:

XVI դ. հայ ժողովրդին բերեց նոր ու դաժան փորձություններ: Պարսկաստանն ու Օսմանյան Թուրքիան միմյանց դեմ պատերազմներ էին մղում, որոնց թատերաբեմը Յայաստանն էր:

1557թ. օսմանյան զորքերը մտնում են Զրաբերդ գավառի դաշտաբերանի գյուղերը³, որտեղ հանդիպելով հայերի լուրջ դիմադրությանը, տալիս են 700 զոհ:⁴ Թուրք-պարսկական պատերազմը հայոց հողի վրա վերսկսվում է Մուհամմեդ Խուրաբանդայի՝ 1578թ. պարսից շահ հռչակվելուց հետո: 1579թ. թուրք արյունաբրու զորապետներից Օսման Յուզեմիրը, հավաքելով կովկասյան ավարառու լեռնականներին, ասպատակ սփռեց Գանձակից մինչեւ Պարտավ ու Զրաբերդ, Խաչենից Վարանդա եւ Դիզակ, ընդհուար մինչեւ Արաքս գետը, գերելով ու կոտորելով բազմաթիվ անմեղ մարդկանց:⁵

Այս դեպքերից հետո, վերջին դարերում, իին նախարարական տների փոխարեն ասպարեզ եկան մելիքները, որոնց իրավասությունները կանոնակարգվեց Շահ Աբասի ժամանակ (1603թ.): Այլասեր ժողովուրդներին իրենց ներկայացուցիչների միջոցով կառավարելու նպատակով շահը հայ իշխանների մեջ հաստատեց «Մելիք» տիտղոսը՝ վարձահատույց լինելով այն ծառայությանը, որ կատարեցին հայերը օսմանյան թուրքերի դեմ մղված կրիվներում: Արցախի հինգ մելիքություններից մեկը՝ Զրաբերդի մելիքությունն էր, ուր իշխում էին Մելիք-Խորայելյանները: Մելիք Խորայելի որդի Եսային 1687թ. ջարդում է խանական զորքերին, գրավում Կոււանք կոչվող ձորը, ինչպես նաև՝ Ռմբոստյան լեռներից մինչեւ Դյուտական գյուղը:⁶

XVIII դ. սկզբներից սկսած՝ Ղարաբաղի մելիքները պայքարում են թոթափելու պարսից լուծը եւ հիմնելու անկախ պետություն: Այս ժամանակ-

¹ Գանձակեցի Կ., Պատմութիմ Յայոց, էջ 359:

² Նույն տեղում:

³ Բարիստատարեանց Ա., Պատմութիմ Աղուամից, Բ, Թիֆլիս, 1907, էջ 23:

⁴ Բարիստատարեանց Ա., Արցախ, էջ 213-214:

⁵ Դավիթեցի Ա., Պատմութիմ, Վաղարշապատ, 1896, էջ 608, Ա. Չամչյանց, Յայոց

Պատմություն, Գ, էջ 530-531, Վ. Ճակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. 2, Երեւան, 1956, էջ 242, 252, Մատենադարան, ծեռ. 173, էջ 95 ա:

⁶ Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, հ. 10, Երեւան, 1959, էջ 175:

ներից էլ սկիզբ է առնում հայ ժողովրդի պատմության ազատագրական շարժումների նոր ժամանակաշրջանը։ Դարի 20-ական թվականներին ակտիվացան նաեւ Օսմանյան թուրքերը, որոնք, տեսնելով ռուսների առաջխաղացումը իրենց սահմանների մոտակայքում¹ եւ քաջատեյակ լինելով՝ Պետրոս Առաջինի աշխարհակալական ձգտումներին, իրենց հերթին գրավեցին սահմանակից պարսկական նահանգները եւ մոտեցան Դարաբաղի մելիքների տարածքներին, որոնց սպառնում էր նաեւ լեզգիների եւ պարսից խաների հարձակումների վտանգը։ Թշնամու դեմ պայքարելու եւ երկիրը զինված հարձակումներից գերծ պահելու նպատակով Զրաբերդի եւ Պարտավի հայ զորահրամանատարները իրենց պաշտպանական ամրությունները դարձրին հենակետային կենտրոններ։²

1722թ. ապրիլի 20-ին լեզգի լեռնականները «... Ի Կարկառ գետոյն մինչեւ ի Դրդուական գետն եւ յերկիրն Զարաբերդու, միահաղոյն ասպատակ սփրեցան ընդ լերինս եւ ընդդաշտս»։³ Գերելով ու թալանելով բնակչությանը ավարառունները «բանակեցան ի Վերայ գետոյն Դրդու, զոր այժմ թարթառ կոչեմք... ի Վերայ կամրջին, որ Ղառի-քօրիփի ասեն»։⁴ Սակայն լեզգիները «ոչ կարացին այնքան վնասել երկրին Զարաբերդու եւ Պարտայու... Քանզի նոքա յառաջազգած լեալ ի յամուր տեղիս լերանց իւրեանց ամրացեալք էին, մանաւանդ թե երիտասարդք ոմանք ընդդիմանային եւս, որ եւ զբագումս հարին ի թշնամնեացն»։⁵

XVIII դ. 20-ական թվականներին (մասնավորապես 1722թ. դեկտեմբերին) հայ ինքնապաշտպանական ուժերը Զրաբերդի մելիքներ Սարգսի եւ Շիրվանի, Գյուլիստանի մելիք Եսայի հարյուրապետի, ինչպես նաեւ Գանձակի մելիք Ջովսեփի գլխավորությամբ պայքարում են ոչ միայն լեզգի լեռնականների, այլև թուրքերի դեմ՝ պաշտպանելով Դարաբաղի մատուցները Շամախու թուրքերի առաջնորդ Ջաջի Դառլիի զորախմբերից։⁶ Պարբերաբար կրկնվող թշնամական գործողություններին վերջ տալու նպատակով 1723թ. ճարտին Գանձասարի Ներսես Կաթողիկոսը նամակ է հղում Պետրոս Մեծին⁷, խնդրում օգնել եւ հայ քրիստոնյա ազգն ազատել մահմեդական նվաճողներից։ Նույն թվականին Պետրոս Առաջինին են դիմել

¹ 1722-23թթ. ռուսները նվաճեցին մերձկասպյան պարսկական տիրույթները՝ Դերենտը, Գիլանը, Բաքուն եւ այլն։

² Արման-ռուսական պատմությունների համար առաջնային գործությունների մասին՝ պատմություններ։ Երևան, 1964, առաջնային համար 39.

³ Պատմություն կամ Յիշատակ ինչ ինչ անցից՝ դիպելոց յաշխարհին Աղուանից, Եսայեայ Ջասան Զալալենց, ի թուական հայոց Ոճկ, Շուշի, 1839, էջ 45, նույնի՝ Երուսաղեմի 1868թ. հրատարակությունը, էջ 37, նույնը՝ Դ. Ալիշան, Արցախ, «Բազմավեպ», 1989, N 1-4, էջ 200-201.

⁴ Նոյն տեղում, էջ 47, 38 (Պատի-քորիփի՝ այժմյան Պառավի կամուրջը – Ս. Ա.):

⁵ Նոյն տեղում։

⁶ Արման-ռուսական պատմությունների համար առաջնային գործություններ։ Երևան, 1967, առ. 177, էջ 29:

⁷ Էզօ Գ., Ծոնական Պետրա Վելիկու առաջնային պատմությունների մասին՝ պատմություններ։ ՍՊԸ, 221, էջ 344-345:

Ղարաբաղի չորս մելիքները (այդ թվում՝ Զրաբերդի) եւ խնդրել օգնություն՝ լեզգիների եւ թուրքերի դեմ նղպող չկանխվող պայքարում. «Ժ եւ մեկ տարի է, որ Երևան Աղուանից գերի է ձեռս լազգուց, նոքայ կոտորելին եւ Եսիրն տանելին, ետ մնացածն տեղոյս բռնակալաց թուրքերն այրելով... հարկս բահանջին, ամէն թախտու թալան յափշտակ էին»:¹

1724թ. հունիսին, ռուս-թուրքական պայմանագրի կնքումից հետո, թուրքերը, հարմար պահ ընտրելով, գրավեցին Լոռին, Թիֆլիսը, Ղազախը եւ այլ շրջաններ ու մտան Գանձակ: Ղարաբաղի իշխանությունները մերժեցին հպատակության նասին Ումար փաշայի սպառնալից դիմումը եւ թուրքական հրամանատարությունը գործերը շարժեց Արցախի վրա (1725թ. գարուն):² Մելիքները դարավոր թշնամու դեմ միասնական ճակատ ստեղծեցին: Ինքնապաշտպանությունն ու հայ ժողովրդի ազատագրական պայքարը, ընդհուած մինչեւ 1729թ., դեկավարում էր Ավան հարյուրապետը:³ Մեծ աշխատանք են կատարում Եսայի կաթողիկոսն ու Իվան Կարապետը, որը ցարի կողմից Ղարաբաղ էր ուղարկվել դեռևս 1723թ. դեկտեմբերին:⁴ 1726թ. ընթացքում Ղարաբաղի բնակչությունը շարունակում էր պայքարը թուրքերի դեմ:⁵ 1726թ. գարնանը թուրքերը հարձակվեցին Խաչենի եւ Զրաբերդի հայկական գյուղերի վրա, բայց պարտություն կրեցին: Ավան եւ Օհան հարյուրապետների 1726թ. նոյեմբերի 14-ի՝ ռուսական արքունիքին հղած նամակից⁶ պարզվում է, որ օսմանյան բանակը Սարու-Մուստաֆա փաշայի գլխավորությամբ հարձակվելով իրենց սխնախների վրա՝ պարտություն է կրում: Թուրքերը տալիս են 800 զոհ եւ, ծանր հակահարված ստանալով, նահանջում Գանձակ:

Այդուհանդերձ, ուժերն անհավասար էին եւ մելիքները Եսայի Յասան Զալայանի գլխավորությամբ, նամակով դիմում են վրաց Վախթանգ թագավորին, խնդրում արագացնել սպասվելիք օգնությունը: Դիմումի մեջ նշվում է, որ թուրքերը «հիմա տուս են եկել մեզ վերայ կրիւ են անում: Ինչպես որ յունիս ամսոյ Ժ (10)-ումն Գանջու ղոշունն (Գանձակի թուրքական գորքը-Ս. Ս.) եկին Խաչինու վերայ՝ Ղազանչի, Ղապարու, Չանկաթաղ անուն գեղարանքն չափմիշ արին՝ կոտորեցին, Եսիր ապրանքն տարան: Մենք էլ տուս եկինք նոցա վերայ, աստուծով, կոխեցինք, կոտորե-

¹ Նույն տեղում, էջ 341:

² Արքահաման Ա., Մի էջ Անդրկովկասի ժողովուրդների եւ հայ-ռուսական հարաբերությունների պատմությունից, Երեւան, էջ 114, 116:

³ Արմենо-ռուսские отношения в во второй тридцатилетии XVIII в., т. 3, ч. 2, Ереван, 1978, էջ 358:

⁴ Արքահաման Ա., նշվ. աշխ., էջ 32:

⁵ Նույն տեղում, էջ 122:

⁶ Նույն տեղում, էջ 257: N 76 փաստաթուղթ եւ էջ 125:

ցինք եսիրն, ապրանքն թափեցինք, փախցրինք. Էլ նոր շատունք գալու են մեզ վերայ...»:¹

Չորս օր հետո, չսպասելով վրաց թագավորի պատասխանին, Եսայի Հասան Զալայանը դիմում է Իվան Կարապետին եւ նրան հասկանալ տալիս, որ ինքը, ելնելով Ղարաբաղի բնակչության ֆիզիկական գոյությունը պահպանելու շահերից, ստիպված է հրաժարվել թուրք բռնագրավիչներին դիմադրելուց², քանի որ իրեն հայտնի է դարձել, որ համաձայն Կոնստանդնուպոլսի՝ ռուս-թուրքական դաշնագրի, երկու տերությունների միջեւ անցկացվող սահմանազատման գծի հաստատման նպատակով, Շամախում արդեն հանդիպել են ռուսական (Ալեքսանդր Ռումյանցել) եւ թուրքական (Հաջի Մուստաֆա փաշա) ներկայացուցիչները:³

1727թ. թուրքերը նվաճում են Ղարաբաղը: Ջրաբերդի մի հիշատակարանում կարդում ենք. «Սեր երկիրը օսմանցիների իշխանության տակ է»:⁴ Այս իրադարձություններից հետո, աստիճանաբար սկսվում են քայքել հայոց սխնախները, Ազան հարյուրաբետը հեռանում է Ռուսաստան (1729թ. – Ս. Ս.) եւ Ղարաբաղում վերականգնվում է նախսին վիճակը՝ վերածվում անջատ մելիքությունների:⁵ Իրադրությունը կտրուկ փոխվում է դարի կեսերին, երբ Վարանդայի

Մելիք Շահնազարը, իր մոտ հրավիրելով Փանահ խանին, դավաճանությամբ նրան է հանձնում Շուշիի բերդը:⁶ Յայրենի հողի համար կռվող մյուս մելիքները (մասնավորապես Ալլահ Ղուլին եւ մելիք Յաթամը, որոնք տիրում են Վերին Խաչենին, Յավքախաղաց, Յանուարերոյ, Յաթերը, Ազանա եւ Ջրաբերդ ամրոցներին) չհանդուրժեցին այս դավաճանությունը եւ անզիջում պայքար ծավալեցին ինքնակոչ խանի դեմ: Անպարտելի հերոսի համբավ էր վաստակել Ջրաբերդի մելիք Ալլահ Ղուլին (մելիք Եսայու հաջորդը),⁷ որին խաբեությամբ կալանավորում եւ սպանել է տալիս Փանահ խանը: Սպանված եղբորը փոխարինած մելիք Յաթամը, Գյուլիստանի մելիք Շովսեփի հետ միասին, շարունակում է պատերազմը խանի դեմ: Յաստատվելով Ջրաբերդ անառիկ ամրոցում⁸, նա շուրջ մեկ տարի դիմադրեց հրոսակներին, որից հետո, զորքը դուրս բերելով ամրոցից, նահանջեց Գյուլիստան, իսկ այնտեղից՝ Գանձակի կողմները:⁹ Այստեղ մնալով շատ տարիներ մելիք Յաթամը բաց չէր թողնում առիթը՝

¹ Արմանո – русские отношения во второй трети XVIII в... т. 2, ч. 2, док. 344, էջ 285:

² Արմանо – русские отношения..., т. 2, ч. 1, введение LXXXVII, док. 345, էջ 285-286:

³ Նոյն տեղում:

⁴ Թօվիշեան Յ., Ցուցակ ձեռագրաց Խաչիկ Վարդապետի Դադեան, մաս Ա, 1898, Վաղարշապատ, էջ 70:

⁵ Լեռ, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1973, էջ 253-254:

⁶ Հերսչոն Մ., Իз истории русско-армянских отношений, книга I, Ереван, 1956, էջ 96.

⁷ Արցախ, էջ 122:

⁸ Ախմեդ-բեկ Ճշևանշիր, Օ политетическом существовании Карабахского ханства, Шуша, 1901, էջ 11.

⁹ Լեռ, Դայ հերոսներ, Ջրաբերդ, մելիքներ եւ նրանց քաջերը, էջ 12:

հարձակումներ ծերնարկելու Ղարաբաղի թուրքերի դեմ, ընդհուած մինչեւ Շուշի:¹ Իսկ երբ մեռավ ինքնակոչ խանը, մելիք Շաքամն ընդունեց Նրան փոխարինած Իբրահիմ խանի՝ հաշտության նասին առաջարկությունը, Վերադարձավ իր հայրենիք Զրաբերդը եւ մինչեւ կյանքի Վերջը (1783թ.) պահպանեց իր սեփականատիրական իրավունքները:²

Զրաբերդը հայտնի է նաեւ այլ քաջարի հերոսներով: Դրանցից էր Դալի Մահրասան (իսկական անունը՝ Ավագ), նրա ընկեր Թիուլի Արզումանը, որոնք իրենց ջոկատներով հալածում ու կոտղում էին թուրքերին, սարսափ տարածում Զրաբերդից Ասկերան, Ասկերանից Շուշի:³ Նրանցից հետ չէր մնում նաեւ Չալաղան Ցուզբաշին (հափշտակող հարյուրապետ) եւ ուրիշներ: Զրաբերդի Վերջին իշխանապետը Սելիք Մեժլումն էր՝ Սելիք Շաքամի որդին: Գործում էր Գանձակում: Նա զինեց վրացիներին, բանակցեց Վրաստան Եկած ռուսական պաշտոնատար անձանց հետ, համագործակցեց Աղա Մահմեդ խանի հետ, միայն թե ոչնչացներ Շուշիում որշացած Իբրահիմ խանին:⁴

Զրաբերդը Վերջին դարերում խաղաղ ժամանակներում գրեթե անբնակ է եղել: Բայց երբ սկսվել են ռազմական ընդհարումները, ժողովուրդն անմիջապես պատսպարվել է ամրոցում, կազմակերպել որմատրություն: Վերջին անգամ, համաձայն աղբյուրների⁵, շրջակա գյուղերի բնակչներն այստեղ են պատսպարվել 1793թ., երբ Պարսկաստանի երբեմնի գերիշխանությունը Անդրկովկասում վերականգնելու նպատակով Ղարաբաղ է արշավում պարսից զրապետ Սուլեյման Շահզադան:

Ամրոցը տեղակայված է Թարթառ (Տրտու) գետի ձախ ափին, Երից-մանկաց վաճքից մոտ 3 կմ հարավ-արեւելք, ծովի մակերեւութից 675 մ բարձրության վրա: Աշխարհագրական կոորդինատներն են՝ N 40 14 21.5, E 46 40 00.5:

Ջայ մեծանուն պատմաբան Լեռն գեղեցիկ ու պատկերավոր է ներկայացնում ամրոցի տեղադրությունը. «Մռավի առջեւով խրոխտ ձորերի մեջ պտույտ տալով, հոսում է Թարթառը: Մի տեղ ... նրա մեջ է թափվում Մռավի կրծքից բխող մի գետակ՝ փրփուր թրղին: Խառնուրդի տեղում բարձրանում է մի ահարկու սեպացած ժայռ, որի կուրծքն ու կատարը շրջափակված են հաստ պատերով: Մարդ վիթխարի եւ անմատչելի ժայռը բերդ է դարձել եւ անվանել Զրաբերդ»:⁶ Այնուհետեւ շարունակվում է. «Երկու կողմից,

¹ Նույն տեղում, էջ 13, Լեռ, հ. 3, էջ 273:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 16: Այս հերոսների գերեզմանները գտնվում են Գամձակի Շայոց եկեղեցու գավթում, ինչպես նաև՝ Դաստակերտի Եղիշ Առաքյալ կամ Զրվշտիկ վանքի երրորդ մատուիդի մուտքի մոտ (Արցան, էջ 28, 236):

⁴ «Ազատամարտ», N 42, 1991:

⁵ Մատենադարան, ձեռ. 2734:

⁶ Լեռ, Ջայ հերոսներ. Զրաբերդ, մելիքներ եւ նրանց քաջերը, էջ 5:

արեւմուտքից եւ արեւելքից այս հսկա ժայռը կազմում է վիթխարի բնական պատեր, որոնք կախ են ընկած Թրղող եւ Թարթարի վրա: Իսկ երրորդ, հարավային կողմը մի դժվար եւ թեք զառիվայրով իջնում է դեպի Թարթար... Միայն ժայռերը չեն անրացնում այդ բերդը, միայն խոր ձորերը չեն, որ կտրում են նրա չորս կողմը անմերձենալի խրամատների պես: Երեք կողմից նրան շրջապատում են անհանգիստ արնախում ջրեր... ջրերի այդ բերդիցն է ամբողջ գավառը Զրաբերդ կոչվում»:¹

ճանապարհամերձ կողմից (հյուսիսից) ամրոցակալ ժայռի բարձրությունը մոտ 40 մ է, որի գագաթնամասում ամրոցապատն է՝ աշտարակ-ներով: Մյուս երեք կողմերից, մասնավորապես հարավային եւ արեւմտյան հատվածներում 100 - 150 մ է:

Ամրոցը, որ կազմում է երկու գետերի միախառնման ամբողջ ժայռագանգվածը, գրաղեցնում է ավելի քան 10800 քառ. մ տարածություն (միջին չափերը՝ 60 x 180 մ): Այստեղ կան բազմաթիվ ավերակված բնակարաններ, պաշտպանական խցեր, գետնափոր շինություններ, պահեստներ եւ այլն: Վերնամասը մեծավմասամբ խորորոշոր է: Միակ հարթ տարածքը կենտրոնական մասում է, որի արեւելակողմ եւ հարավային հատվածներում տարածվում են տարբեր նշանակության շինությունների ավերակները: Այստեղ է գտնվում կիսակլոր հատակագծով, մասամբ գետնափոր, քաղակապ, 3 x 2 մ չափերի մի շինություն, որն ըստ եռթյան օգտագործվել է որպես պարենի կամ նթերքների պահեստ: Այն կառուցված է անտաշ քարերով ու կրաշաղախով՝ հարավային եւ հարավապարեւմտյան կողմերից հարմարեցված ժայռաքարին: Նշված շինության հարավ-արեւելյան կողմում տեղակայված են երեք կցակառույց-սենյակներ: Դրանցից հյուսիսային կողմին՝ կառուցված խառը քարերով ու կրաշաղախով, ունի 4,5 մ երկարություն եւ 2,8 մ լայնություն: Սուլտը (0,77 մ լայնությամբ) հարավից է, պահպանվող պատի բարձրությունը՝ 1,6 մ: Այս շինությանը կից սենյակներից մեկը բավականին լավ է պահպանվում: Պատերի միջին բարձրությունը 2 մ է, արեւելյան կողմից՝ ավելի քան 4 մ: Մուլտը հարավ-արեւելյան կողմից է: Արեւելքից կամարաձեւ (1,17 մ միջին լայնությամբ) խորանն է, որի եզրամասերը շարված են կարմիր աղյուսով:

¹ Էե՛, Վերջին վերքեր, մաս 1-ին, էջ 13: Իրոք, ամրոցի անվանումը համապատասխանում է նրա տեղադրությանը՝ երկու գետերի միախառնման տեղում, կապվելով ջրի հետ: Սակայն, այստեղ կա մի ոչ երկրորդական հանգամանք. պատմական աղբյուրներում (Կաղամկատվացի, Գանձակեցի, Օրբելյան և ուրիշներ) ի սկզբան ամրոցը ներկայացվում է «Զրաբերդ» ամվամբ, որը հիմք է տալիս ամվամումը ստուգաբարմել այլ կերպ. «Զար»-ն ունի նաև ամօրեն ու խոտորեալ նշանակությունը (Նոր բարգիր հայկագեն լեզուի, հ. 2, Վենետիկ, 1837, էջ 563), իսկ Վերջինս՝ մոլոր, ծուռ, զարտուղի իմաստը (Ծովյան տեղում, հ. 1, Վենետիկ, 1836, էջ 969):

Միջնաբերդը տեղակայված է ամրոցի հարավակողմ բարձրադիր վայրում եւ վերաբերում է XVII-XVIII դր.: Այն իրականում մի ամրոց-ապարանք է՝ բաղկացած մի շարք սենյակներից¹: Արեւմտյան սենյակաշարում երկայնական պատերով երեք կցասենյակներ են (հյուսիսակողմ եզրանասում գտնվողը՝ 4,8 x 3,6 մ չափերի, մյուս երկուսը՝ 3,4 x 5,5 մ), որոնք ունեն մեկական պահպանախորշ-պտրիաններ, բուխարիներ եւ մեկական մուտք միջանցքից: Պատերի բարձրությունը 2 – 4 մ է, հաստությունը՝ 90 սմ: Ավելի լավ պահպանված եզրային առաջին սենյակում (մուտքից աջ) ուշագրավ է մքերքների (ալյուրի, ցորենի կամ ընդեղենի) պահպանության համար նախատեսված հորը կամ ամբարը, որ ներկայումս կիսովին լցված է հողով: Երեք կցասենյակներին հարավային կողմից հաջորդում է մի ընդարձակ շինություն (չափերը՝ 8,2 x 6 մ), որը դահլիճի տպավորություն է թողնում: Այստեղից մուտք-անցումները տանում են 2,5 x 8,3 մ չափերի, դեպի հարավ սուր անկյան տակ նեղացող սենյակը եւ հարավարեւելյան կողմում գտնվող խուց-կացարանը: Դահլիճից անցում է կատարվում նաեւ ամրոց-ապարանքի հարավ-արեւմտյան կողմով տարածվող պարսպապատին հարող աշտարակը (չափերը՝ 2 x 2 մ):

Միջնաբերդ - գագաթնամասում հարմարեցված սենյակ-կացարանների թիվը հասնում է յոթի, չորս շինություն- կցակառույցներ էլ տեղակայված են դրանցից հարավ-արեւելք, թեքադիր վայրում, որոնք կազմում են ամրոց-ապարանքի հարավ-արեւելյան սենյակաշարը: Արեւմտյան կողմի վերնամասում գտնվող շինությունը՝ 2,2 x 5,8 մ չափերի, դրանցից ներքեւ՝ պտրիանով եւ հյուսիս-արեւելյան կողմից բացվող պատուհանով շինությունը՝ 3 x 8,7 մ չափերով եւ մինչեւ 5 մ բարձրությամբ պատերով, 2,5 մ բարձրությամբ պատերով 3,8 x 6,3 մ չափերի շինությունը եւ ժայրին հպված սենյակը՝ 2,6 x 5,3 մ չափերի: Ըստ պահպանված հետքերի՝ բոլոր սենյակների ծածկերը եղել են փայտաշեն՝ հարթ հողածածկ տանիքով:

Բացի վերոհիշյալ շինություններից, ամրոցի եզրանասերում պահպանվում են քնակելի տների փլատակներ, որոնք ավելի հին են, քան ներկայացված (XVII - XVIII դարերի) շինությունները: Ամրոցի վերնամասում շրջագոռվ անց էր կացվել պարսպապատ, որը բազրիքի դեր է կատարել: Հարավ-արեւելյան եւ արեւմտյան կողմերից պարիսպներն ունեին դիտակետեր: Պարսպապատերը բավականին լավ պահպանվում են ամրոցի հատկապես հարավ-արեւելյան եւ հարավ-արեւմտյան կողմերում, ինչպես նաեւ հյուսիսային հատվածներում: Դրանց միջին հաստությունը 1 մ է: Հյուսիսային կողմի պարսպաշերտի վրա, գագաթնամասում, հյուսիս-

¹ Դույան Ա., Արցախի եւ Սյունիքի մելիքական ապարանքները, Երեւան, 2001, էջ 82-84:

արեւելյան եւ հյուսիս-արեւմտյան հատվածներում կառուցված են երկու աշտարակներ, որոնք հսկողության տակ են պահում ամրոցամերձ ճանապարհը: «Եհարկե, այսպիսի մի ամրություն անհնարին էր պատերազմական գործողություններով գրավել, ուստի պաշարողները համբերությամբ նստել են նրա շուրջը, հեռվից նայել, մինչեւ որ կամ մի դավաճան կմատնե բերդը, կամ թե սովը կակսե պաշարուածներին զոռել: Ավանդությունը պատմում է, թե մի անգամ այսպիսի սով է ընկնում բերդի մեջ, բայց գտնվում են քաջեր, որոնք չեն թողնում, որ սովը մարդկանց գերության դուռը տանի: Նրանք դուրս են թափում բերդի շինությունների համար ամբարած կիրը, փոռում են, սկսում քամել մաղերով: Պաշարող թշնամին տեսնում է այդ, կարծում է թե կիրը ալյուր է, որ դեռ երկար ժամանակ պիտի պահէ պաշարուածներին եւ հուսահատված քաշվում է, հեռանում»:¹

Զրաբերդ ամրոցն ունի միայն մի մուտք պարսպի պատով:² «Թրղի գետի ժայռոտ ձորի կողքով, ճանապարհի գլխին, ժայռի մի ահագին բեկորի վրա երեւում է բերդի դուռը», - գրում է Լեռն:³ «... Բայց որովհետեւ բերդումն չկայ ջուր, վասն որոյ բերդիս միջից դեպի Թարթառ գետն կտրած են վիմափոր ականներ, որոնց միջի սանդղաձեւ աստիճաններով երթեւեկելով ջուր մատակարած են բերդիս պաշարնան ժամանակ: Թարթառն գործ դնելով իւր մշտագործ գործիները, վերստին փորած և իջեցրած է բավականին իւր յատակը, այս պատճառաւ ականների արտաքին բերաններն բարձր մնացած են գետի երեսիցն»:⁴

Ամրոցի խիտ բուսականությունը (ծառեր, թփեր, մացառուտներ) հնարավորություն չտվեց առավել ամբողջական ու նանրակրկիտ ուսումնասիրություն կատարել: Կարծում ենք, որ պեղման-մաքրման աշխատանքների միջոցով միայն կարելի է բացահայտել այս նշանավոր ամրոցի պատմությունը, փաստացի տվյալներով որոշել նրա գոյատեւման ճշգրիտ էտապներն ու ճարտարապետական, ամրաշինական յուրահատկությունները:

КРЕПОСТЬ “ДЖРАБЕРД”.

Слава Саргсян

Резюме

¹ Լեռ, իմ հիշատակարանը, էջ 264:

² Արցախ, էջ 240: Երիցմանկանց վաճք տանող ծանապարհի կողմից, ամրոցի տակով 20-րդ դ. 50-ական թվականներին երկրաբանական-հետախուզական արշավախումքը փորել է թունել, նպատակ ունենալով իդրոլեկտորակայան կառուցել: Այդ թունելից դուրս գալով, ավելի հեշտությամբ կարելի է մտնել ամրոցի տարածքը:

³ Լեռ, իմ հիշատակարանը, էջ 253:

⁴ Արցախ, էջ 240:

На основе сопоставления исторических источников и результатов исследования на месте описывается одна из известных крепостей Хачена, которая оставила значительный след в истории Арцаха. Вместе с краткой историей крепости и описанием основных строений комплекса, показаны роль и значение этого единственного в своем роде оборонительного узла в нижней долине реки Тартар.

THE FORTRESS “JRABERD”.

Slava Sargsyan

Summary

Based on the comparison of historic sources and research results on the spot one of the most famous fortresses of Khachen is described which left a significant mark in the history of Artsakh. Together with the brief history of the fortress and the description of the main buildings of the complex, the role and importance of this unique defensive unit in the lower valley of Tartar are shown.

ԱՐԵՎԵԼԱՐԱՅԻ ՈՒՍՈՒՄԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ՝ ԳԼԱԶՈՐԻ ԵՎ ՏԱԹԵՎԻ ՀԱՍԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ոռնա Բալայան

*Պատմական գիտությունների բեկմածու, դոցենտ
ԱրԴ*

Հայ ժողովրդի դարավոր պատմության ընթացքում կրթական օջախների առավելապես համալսարանների հիմնադրումը կարևոր նշանակություն են ունեցել երկրի տնտեսական, մշակութային և հասարակական կյանքի զարգացման գործում:

XII–XIV դարերի միջնադարյան Հայաստանի առաջատար բարձրագույն ուսումնական հաստատությունները բեղմնավոր գործունեություն են ծավալել հայ դպրության, մշակույթի և ավանդույթների անաղարտ պահպանման համար:

XIII դարի 20-ական թվականներից սկսած մոնղոլական արշավանքները լրջորեն խոչընդոտել են Հայաստանի հասարակական մտքի զարգացմանը: Սակայն ազգային մշակույթի արժեքները շարունակել են գերակայող դեր կատարել ազգի հոգևոր կյանքում: Այդ արժեքները հարստացել ու պահպանվել են ամենից առաջ կրթօջախներում:

Մոնղոլների ավերածություններից գերծ է մնացել պատմական Սյունիքը, որտեղ և համեմատաբար բարենպաստ պայմաններ են ստեղծվել Սյունիքի Օրբելյան և Խաղբակյան տոհմերի իշխանների ազգանպաստ ձեռնարկումների համար: Նրանց ուշադրության կենտրոնում է գտնվել հայ ժողովրդի մշակութային-մտավոր պահանջների բավարարումը: